ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԻ ԽԱԽՏՄԱՄԲ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՉԱՆՑԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-001-20.05.2017-ՊԱ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՐԱՎՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
Կարինե Աճեմյան Կառավարություն	1-ին հոդված	շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 1. «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-8-Ն օրենքի (այսուհետ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասում՝ 1) «2015 թվականի մայիսի 1-ն» բառերը	Ընդունվել է

		փոխարինել «2017 թվականի դեկտեմբերի 1-ն» բառերով. 2) «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների (անձանց) վրա» բառերը փոխարինել «այն քաղաքացիների վրա, որոնց նկատմամբ պարտադիր զինվորական ծառայությունից խուսափելու հիմքով օրենքով սահմանված կարգով հարուցված է քրեական հետապնդում»: բառերով»:	
Կորյուն Նահապետյան	Նախագծի 1-ին հոդվածից հետո	լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդված. **«Հոդված 2. Պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացու նկատմամբ հաշվարկվող գումարը** Պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացին իր նկատմամբ	Ընդունվել է

		հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելու և օրենքով սահմանված կարգով պահեստազորում հաշվառվելու նպատակով կարող է օրենքի խախտմամբ չզորակոչված (խուսափած) յուրաքանչյուր զորակոչի դիմաց վճարել նվազագույն ամսական աշխատավարձի 200-ապատիկի չափով գումար (այսուհետ՝ օրենքով սահմանված վճար)»:	
Կարինե Աճեմյան Կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածից հետո	լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդված. «**Հոդված 3**. Օրենքի 3-րդ հոդվածում՝ 1) 1-ին մասը լրացնել նոր նախադասությամբ. «Դիմում կարող է	Ընդունվել է

		ներկայացնել նաև պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացու կողմից լիազորված անձը:». 2) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ. «2. Պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացու կամ նրա կողմից լիազորված անձի դիմումը պետք է լինի ստորագրված, նշվի ներկայացնելու ամիսը, ամսաթիվը, տարեթիվը, քաղաքացու ազգանունը, անունը և հայրանունը, Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում բնակության (հաշվառման) վայրը, պարտադիր զինվորական ծառայությունից խուսափելու ժամանակահատվածը և պատճառները: Դիմումին կից ներկայացվում են՝ քաղաքացու	

		ծննդյան վկայականի և անձնագրի պատճենները, բնակության (հաշվառման) վայրի մասին տեղեկանք, քաղաքացու կողմից պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու հիմք ունենալու դեպքում՝ նաև հիմքը հաստատող փաստաթղթերը, իսկ դիմումը լիազորված անձի կողմից ներկայացվելու դեպքում՝ նաև լիազորված անձի անձնագրի պատճենը: Պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու հիմքը հաստատող փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակով և դրանց պատճեններով:	

		Եթե պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու հիմքը հաստատող փաստաթղթերը հանդիսանում են օտարերկրյա պետությունում տրված փաստաթղթեր, ապա դրանք պետք է վավերացված լինեն ապոստիլով և նոտարական կարգով հաստատված հայերեն թարգմանությամբ: Տարածքային զինվորական կոմիսարիատում պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու հիմքը հաստատող բնօրինակ փաստաթղթերը համեմատվում են դրանց պատճենների հետ, որից հետո բնօրինակ փաստաթղթերը վերադարձվում են	

		դիմումատուին:»:	
Կորյուն Նահապետյան	Նախագծի 1-ին հոդվածից հետո	լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդված. «Հոդված 4. Օրենքը լրացնել նոր 8-րդ հոդվածով. **Հոդված 8. Եզրափակիչ դրույթ** Սույն օրենքը գործում է մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը»:	Ընդունվել է